

ատեն 200 եւրոտ հեռադրութենէ մը (1 եւրոտ = մ. 0914) տեսանք որ իշխանին ձին զատարկ թամբով ետենէս կը վազէր։ Կարծեմ թէ իշխանը քրտաւ լին մէջ սպաննուած պիտի ըլլայ։ Իրեն հետ մէկտեղ ինկան երկու ուղեկից զինուորներն ։

Եթէ գէպը այսպէս պտտահած ըլլայ, յայտնի կը տեսնուի որ Գերէյ տեղակալը գէշ գործեց այս բանին մէջ, միայն ինքըզինքը մտածելով առանց հոգ ընելու իրմէ աւելի թանկագին կեանքի մը։ Այն ալ ստոյգ է որ տեղակալը փորձեց վերջը ինքզինքը արգարացընել փոխելով իր առջի պատմութիւնը։ Այսինքն թէ հաստատելով որ առաջին հրացանաց պարպելուն իշխանը ընկաւ մեռաւ, և թէ ինքը այն ատեն փախաւ՝ երբոր տեսաւ որ ալ իր զինուորակիցը ազատելու յոյս մը չկար։

Բայց այս վերջի ըսածն ալ ուրիշ կողմանէ սուտ ելաւ, վասն զի իշխանին մարմնոյն վրայ հրացանի հարուածոց ամենեւին նշան չգտնուեցաւ։ Ասոր համար է որ իշխանին մահը մեծ ցաւ պատ-

ճառեց յԱնգղիա, ինչպէս նաև իրենց համար մեծ նուաստութիւն։ Բաց 'ի Գերէյէ ծանր կտամբանաց տակ ինկաւ նաև Չիլմսֆորտ զօրադուին, որ իշխանին կենացը վրայ հսկելուն այն հոգը այն խնամքը չունեցաւ՝ ինչպէս ցուցուց Բարեյուտոյ Գլխոյն դժբաղդ բանակին վրայ։

Զուլունները ընդհանրապէս կը կտրատեն ընկած թշնամիները, ուստի բաղդ մը եղաւ որ մարմինը անարատ զրտնուեցաւ, թէպէտ և տասներեօթը զաւկայիւայի հարուածներէ վիրաւորուած՝ որոնցմէ մէկը թափ անցեր էր աչքին մէջ։ Վիրը կախուած մնացեր էր դեռ միտալ մը՝ որուն մէջ կար իրեն հօրը մազերէն և ուղղափառ հաւատոյ ջերմեռանդական առարկաներ։

Դիակը անզդիացի պատերազմական նաւով բերուեցաւ 'ի Տիւրպան, ուսկից փոխադրուեցաւ ուրիշ նաւու մը մէջ, և անով հասաւ յուլիսի կէսերը յԱնգղիա։ Չիզըլըրսոյ մեծ և փառաւոր յուզար, կաւորութիւն եղաւ։

ԶՈՒԼՈՒ ԱԶԳԻՆ ԱԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ

Բարեյուտոյ Գլխին հանդիսացեալ թատերական տեսարանն դարձեալ բովանդակելուպիւղ ուղադրութիւնը նաբոլէտն Գի որդւոյն սրտառու ժահուամբը գրաւեց Զուլու ազգին վրայ, զոր ընկճելու համար երկայն ժամանակէ 'ի վեր կ'աշխատի Անգղիոյ քաղաքակաւնացեալ զօրութիւնն։ Զուլուք ըստ ամենայնի բարբարոս ժողովուրդ մ'են։ Իրենց երկիրը կ'ինկնայ Հնդկային Ուլկիանու արեւմտեան ափանցը վրայ, գրեթէ Մատակաքար կողմոյն հարաւային սահմանածայրին գիմացը, և կը տարածի հարաւային կողմանէ Գուկղա գետոյն խառնուեքէն՝ գէպ 'ի հիւսիս մինչև Տիւրպոյայ ծոցը։ Գարուփոս և անտառային ըլլալով՝ ամենայարմար է

նիզակաւոր պատերազմներու և դարանակալութեանց։ Բնակչաց թիւը 350 հազար կը համարուի։ Մարդկանց մէջ կարողները պարտաւորեալ են զինուորական կենաց՝ պատանեկութեան ըսկիզբէն մինչև 'ի մահ։ Երկուքէն սկըսեալ մինչև հինգ տարուան միջոցի մէջ, բովանդակ երկրին մէջ գտնուած 14 տարուան հասած պատանեաց զունդ մը կը կազմուի։ Այս զունդս իրեն քրտնաւ կամ զինուորական ամիոցը կը չինէ, հոն բնակութիւն հաստատելով։ Քանի մը տարուընէ յետոյ՝ նոր զունդը կը միանայ նախընթաց հին գնդի մը հետ, զինուորական կրթութիւնն ամբողջացընելու համար։ Քանի մը ամիոցաց կամ գնդից բազմութիւնն՝ զինուո-

բուական բանակ մը կը կազմեն, 1873ին՝ տասուերկու բանակ ձևացած կային և երկուք ալ ձևանալու վրայ : Իւրաքանչիւր բանակը կը կազմուի 33 վաշտերէ, և ամէն վաշտն՝ տասէն սկսեալ մինչև տասնուհինգ մասնական զնդերէ, ընդ ամէն 50,000 անձինք :

Զինուորք՝ առանց թագաւորին հրամանին կարող չեն ամուսնանալու, և այս հրամանն ամբողջ մէկէն կը շնորհուի բովանդակ վաշտի մը, երբ զայն կազմող անձինքն՝ ամենն ալ 40 տարուան հասնին, սակայն այնու պայմանաւ՝ որ վաշտը քաջութեան փորձեր ցուցած ըլլայ : Այս կերպով 1868ին՝ 33 վաշտից մէջ 18 վաշտ միայն դեռ այս հրամանն ընդունել էին : Անոնք որ ամուսնանալու հրաման կ'ունենան՝ կը կոչուին սև վաշտք, իսկ մնացածները ձերմակ վաշտք, իրենց վահանաց գունոց համեմատ : Այս երկու խմբից մէջ ուրիշ զանազանութեան նշան մ'է նաև գլխու մագերուն տարբերութիւնն. ամուրիք՝ մազերնին իրենց բնական վիճակին մէջ կը ձգեն, մինչդեռ ամուսնացեալք զլուխնին կը գերծեն, պսակած և չրջանակ մը միայն թողով : Օրիորդք՝ յանձն չեն առնուր ամուսնանալու պատերազմի մէջ, մոտոզ զինուորի հետ : և որովհետև միջին դարու ապստամկան սովորութեան նման, արք՝ կանանց աչքին առջև կը պատերազմին, պատերազմուց զօրութիւնն կրկնապատիկ կը յաւելու իրենց սիրելեաց համար, մուշքն և հաւանութիւնը ստանալու մտածութեամբ. թերևս նաև Զեթթի վայոյ իրենց թագաւորն այս ամուսնական սովորութեան պատճառաւ չկրցաւ զիջանիլ անգլիական վերջին ազդարարութեանն (ultimatum), և խաղաղութեան փափաքելուն հանգրծա՞ ստի պոսեցաւ պատերազմ հրատարակելու : Այս պատերազմաւ ամուրիք զօրաց վաշտերն կը յուսան ամուսնութեան հրամանն ընդունել. և անգլիական զաթթականութիւնն Դուկկա գետոյն քով իրեն մեծ դժբաղդութեամբն՝ այսպիսի սովորութեան մը արգասիքը փորձեց :

Զեթթի վայոյ՝ որ վերջերս Անգլիացուց բաղդը ամենամեծ վտանգի մէջ դրաւ, 1872էն ի վեր կը թագաւորէ Զուլուններուն վրայ : Բայց թագաւորն լէն առաջ ևս չատ անգամ իրեն վրայ խօսեցրնել տուաւ, և շատ քիչ անգամ գովութեամբ : Ապստամբեցաւ իր հօրէն Բանտայէ, որ կը ջանար օրէ օր Անգլիացուց հետ աւելլի ևս բարեկամանալ, և այնչափ զօրացաւ՝ մինչև հայրը կենացը վրայ վախնալով՝ ուղեց Անգլիացուց քով Նադալիոյ երկրին մէջ ապաւինել : Բայց Զեթթի վայոյ ժամանակ չի թողուց, և ետեւէն իյնալով, հասաւ, պատերազմեցաւ, պատերազմին մէջ սպաննեց իրեն հակառակորդ հինգ եղբայրները : և քաղաքական կուռ վերջ տալու համար 1856ին որոշուեցաւ՝ որ Զեթթի վայոյ՝ հօր Նախագահ պաշտօնեայն ըլլայ և ժառանգ հայրենի գահուն :

Գահը ամբառնալէն վերջը մեծամեծ խոստամբք ապահովուց զԱնգլիացիս որ իրեն ամենահաճոյ էր անգլիական զօրութեան հետ խաղաղութեամբ կենալ : Բայց քիչ ետքը, Անգլիացուց քարոզիչներուն դժմունեցած ատելութեան պատճառաւ՝ աւրեց բարեկամական դաշինքը, և սկսաւ ներկայ պատերազմն՝ որ Անգլիացուց համար իրենց կարծածէն աւելի ծանր հետևանք ունեցաւ : Բայց զարմանալին այն է՝ որ Զուլունք բնական բերմամբ ամենկին պատերազմասէր ժողովուրդ չեն, և երկրագործութեան ու հովուութեան կը պարապին : Բայց անգամ մը որ պատերազմի մէջ մտնեն, անուշաճիլ քաջատուութեամբ կը պատերազմին :

Զուլուններուն անցթութեան համեմատ է՝ իրենց սնապաշտութիւնն. և զինուորականք գլխաւոր կախարդներն են : Կախարդն շատ մեծ յարգ ունեցող անձն համարեալ է իրենց մէջ : այս դիւթերուն՝ մեռելոյ մը հողին հանգուցելոյն ողջ գտնուող ազգականաց կամ բարեկամաց մէկուն մէջ փոխադրելու զօրութիւնն կ'ընծայեն : Կախարդք՝ շատ այլանդակ կերպով կ'ըզգենուն՝ նախ բովանդակ մարմիննին կը

ներկէն գունաւոր հողէ զարդեր ձեռ-
ցնելով. գլխու մագերուն մէջ թռչնոց
փետուրներ, կենդանեաց պոչեր և ու-
տրէներ կը յարմարցընեն, թեւերնին
և վզերնին մարդու ոսկրափէշ շինուած
զարդեր կ'անցընեն, իսկ գոտինին՝ բո-
րենայ կամ ուրիշ կատաղի կենդա-
նեաց մորթերէ կը կազմեն: Շատ ան-
գամ և մասնաւորապէս այս կախար-
դաց զօրութեան կ'ապաւինին անձրև
բերել տալու համար, յորմէ հնձոց յա-
ջողութիւնն կախեալ է այն սյրեցող
գօտւոյն մէջ: Յայտնի բան է՝ որ բաց
օդոյ մէջ ապրող ժողովուրդը բնական
վարժութեամբ մը՝ արտաքին նշաննե-
րէ կրնան նախագուշակութիւններ ը-
նել օդոյ փոփոխութեանց վրայ, ինչ-
պէս կը տեսնենք հովուաց և երկրա-
գործաց մէջ:

Երբ ցեղ մը անձրևի կտրտութիւն
ունենայ, կ'երթան առ կախարդն. իսկ
վերջինս երբ հաւանական կը տեսնէ
մօտալուտ անձրևի մը գալուստն՝ իրենց
բերած ընծանին ընդունելով՝ յանձն
կ'առնու խնդիրքնին կատարել. իսկ ե-
թէ ամենեին մերձաւոր անձրևի նշան
մը չտեսնէ, պատասխան կուտայ՝ թէ
աստուածներն իրենց խնդիրքը կատա-
րելու համար՝ ամենազօրաւորագիւտ
բան մը կը պահանջեն. և մինչդեռ մէկ
կողմանէ բարի հաւատքով՝ երկայն ա-
տեն խեղճ ժողովուրդը ի խնդիր կ'ել-
լայ այնպիսի նիւթոյ մը, միւս կողմա-
նէ ալ միջնորդուն իր սովորական փո-
փոխութեամբքն անձրևի կը պատրա-
ստուի:

ՊԵՂՄՈՒՆՔ ՅԻԹԱԿԷ ԿՂԶԻ

Պ. Հենրիկոս Շլիման վերջերս Գաղ-
ղիոյ ճեմարանին ներկայացուց իրեն ի-
թակէի մէջ կատարած վերլին պեղ-
մանց արդուսիքն: Այետոս լերան վրայ
ըրած պեղմանց մէջ հանդիպեր է կի-
կլոպեան շինուածոց, որոնք լերան վը-
րայ եղած դաշտավայրն աւելի ևս լայն-
ցընելու կը ծառայեն, զառ ի վայրին
վրայ մեծ շրջապատ մը կազմելով՝ գրե-
թէ 200 բնակչոց բաւական: Պ. Շլի-
ման գտեր է նաև 190 մեծամեծ տանց
հիմունք: Ըստ կարծեաց Պ. Շլիմանի՝
Այետոս լերան վրայ կը գտնուէր Ողի-
սևսի պալատն, իսկ ի ստորոտն կը տա-
րածուէր քաղաքն՝ իրեն հաստատուն
ամրութեամբք կառուցեալ տուներով:
Լերան ստորոտն ուղղահայեաց կերպով
կարուած է՝ թշնամեաց յարձակումն
աւելի դժուարացընելու համար:

Վարդ դաշտագետնոյն մէջ կը հա-
մարի Պ. Շլիման թէ գտած Ըլլայ Պոր-
կեայ դուռն և յաւերժահարսանց զար-

մանալի քարայրն: Այս քարայրս կրկին
մուտք ունի, մին մահկանացուաց հա-
մար, իսկ միւսն անմահից միայն. այս
վերջին մուտքս ուղղահայեաց շինուած
է, և թերևս զոհագործութեանց ժա-
մանակ ծուխը դուրս հանելու կը գործ-
ածուէր: Քարայրին կամարներէն զէպ
ի վայր կախուած բնական սիւններն,
բանաստեղծին միտքը ձգեցին թերևս
հօն յաւերժահարսանց բնակարանը
կարագրելու: Այն բնական կերպով
ձևացած սեւնց բազմութիւնն մէյ մէկ
գործարաններ էին՝ որոնց վրայ առ-
տուածուհիք կ'ոտայնանկէին իրենց
հրաշալի ձեռագործերը: Վերջապէս Պ.
Շլիման, որ բառ առ բառ ճշմարտա-
պատում կը համարի Հոմերոսի նկա-
րագրութիւնները, գտած կը համարի
նաև, այն տեղէ քիչ հեռու, Եւմէոսի՝
աստուածայնոյ խոզարածին տասուեր-
կու աստղերն: